



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ 106րդ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՕՆԱԿՍԲՈՒԹԻՒՆ

**«ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՆ  
 ՀՈԳԵՒՈՐ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԵՐԱՇԵՆԻՔՆ Է ԵՒ  
 ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԴԻՄԱԳԻԾԻ  
 ԱՌՈՂՋ ՊԱՅՊԱՆՄԱՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԱՒԱՆԴ  
 ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՄԻՋՆԱԲԵՐԴՆ Է»**

**ԸՍՏԱՒ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ**

Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի անդրանիկ հայ գաղութի գաւակները աւելի քան դար մը առաջ, Պատմական Հայաստանի գանազան շրջաններէն Ամերիկա Ներգաղթած ու կայք հաստատած են Զալիֆորնիոյ քաղաքներէն Ֆրեզնոյի մէջ եւ ընդհանրապէս զբաղած հողատնտեսութեամբ եւ այգեգործութեամբ: 1900 ական թուականներուն կազմակերպ համայնքի վերածուած՝ ունեցած են եկեղեցի, իսկ 1914ին, աւարտած ըլլալով ներկայի քարաշէն եկեղեցւոյ շինարարական աշխատանքները, կատարած են օծումը ձեռամբ՝ Գերշ. Տ. Մուշեղ Արքեպիսկոպոս Սերոբեանի, որ նորած եկեղեցին անուանած է Հայց. Առաքելական Ս. Երրորդութիւն Մայր Եկեղեցի:

Քրիստոսի եւ առաքելական հաւատքին, մեր սրբազան հայրերու ոգիին եւ հայկական աւանդութեանց հաւատարիմ՝ Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն Մայր Եկեղեցւոյ հիմնադրութեան 106րդ տարեդարձը Կիրակի 12 Նոյեմբեր 2006ին, հանդիսաւորապէս նշուեցաւ եւ տօնախմբուեցաւ Ս. Պատարագով եւ սիրոյ ճաշկերոյթով:

Թեմիս Բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, առընթերակայ ունենալով Կրօնական ժողովի ատենապետ եւ Քրիստոնեական դաստիարակութեան վարիչներէն Գերպ. Տ. Միւռն Ճ. Կրդ. Ազնիկեանը եւ եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Վահան Քհնյ. Կոստանեանը, ինչպէս նաեւ Ս. Սեղանին սպասարկող բարեշնորհ սարկաւազներ՝ հանդիսաւոր սուրբ եւ անմահ պատարագ մատոյց եւ յաւուր պատշաճի քարոզեց: Առաջնորդ Սրբազան Հայրը ողջունելով եկեղեցականները, հոգաբարձական, երեսփոխանական, սարկաւազաց, դպրաց եւ եկեղեցւոյ արանց եւ տիկնանց մարմինները եւ յարակից քոյր միութիւններու ներկայացուցիչները՝ օրինեալ եւ յիշատակելի այս օրուան համար նախ Աստուծոյ փառք եւ գոհութիւն վերառաքեց, որ արժանի ըրած էր միասնաբար Աստուծոյ տան՝ եկեղեցւոյ սրբազան կամարներուն ներքեւ աղօթելու եւ Իր ընծայած կեանքին ու բիւր բարիքներուն համար պատարագ, ընծայ եւ փառք տալու: Քրիստոսահաստատ եւ առաքելաշաւիղ Հայց. Առաքելական Ս. Եկեղեցին, ըսաւ

Սրբազան Հայրը, հոգեւոր փրկութեան երաշխիքն է եւ մեր ազգային ինքնութեան դիմագիծի առողջ պահպանման ու հայրենաւանդ ժառանգութեան միջնաբերդն է եղած եւ երաշխաւորած մեր գոյութիւնը: Ապա Սրբազան Հայրը անդրադառնալով Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ հոգելոյս հոգեւորական թէ աշխարհական հիմնադիրներուն, առաջնորդ ղեկավարներուն, բարերարներուն եւ անանուն ու համեստ ազնիւ բոլոր նուիրեալներու յիշատակին՝ վեր առաւ անոնց աննկուն օրինակելի հաւատքը եւ զայն գործքով արտայայտելու օրինակելի կեանքը, սիրոյ եւ զոհաբերութեան նախանձախնդիր ոգին, որովհետեւ անոնք հաւատացին եւ հաւատքով ու տեսիլքով գործեցին, կառուցին եկեղեցի եւ կազմակերպեցին ծխական համայնքային կեանքը: Օրհնեա՛լ ըլլայ անոնց յիշատակը:

Աւելի քան դար մը այս եկեղեցին ու ծխական համայնքը Ս. Երրորդութեան՝ Հօր, Որդիին եւ Ս. Հոգիին անունով աղօթեցին, գործեցին ու գոհաբանեցին Աստուած՝ տուիչը եւ յարուցիչը կեանքին եւ Փրկիչը տիեզերքին: Ապա Առաջնորդ Սրբազանը օրուան ճաշու Աւետարանի հատուածին անդրադառնալով, ուր կը նկարագրուէին տառապող կնոջ եւ Յայրոսի աղջկան յարութեան հրաշալի դէպքերը՝ ներկայացուց անոնց հոգեւոր ներքին իմաստը, շեշտելով հաւատքի ներգօթ բուժիչ, կենսագործող եւ հրաշագործ գօրութիւնը: «Մեր նախնիք նոյն այդ հաւատքով ապրեցան, գործեցին եւ պայծառ պահեցին հայ եկեղեցին եւ հրաշակերպեցին մեր կեանքերը: Հետեւաբար, սիրելիներ, եկեք այսօր, եկեղեցւոյս 106րդ տարեդարծի բարեբաստիկ տօնախմբութեան առթիւ, շնորհաւորելով հանդերձ ծխական այս համայնքն ու եկեղեցւոյ հիմնադրութիւնը՝ վերանորոգենք Քրիստոսէ եւ առաքեալներու եւ մեր սրբազան հայրերու կողմէ փոխանցուած առաքելական հաւատքը եւ մեզի վստահուած եւ ժառանգուած նախնեաց աւանդը եւ հաւատարմութեան մեր ուխտը», յորդորեց ան:

Սուրբ եւ անմահ պատարագի ավարտին՝ եկեղեցւոյ հոգեւոր սպասաւորներու եւ հիմնադիրներու լոյս յիշատակին տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն:

Իսկ յաւարտ սուրբ եւ անմահ պատարագին, նախագահութեամբ Թեմիս Առաջնորդ Սրբազան Հօր, եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ Ս. Երրորդութիւն Հայց. Առաքելական Մայր եկեղեցւոյ հիմնադրութեան 106րդ տարեդարծի ճաշկերոյթը, մասնակցութեամբ շուրջ 300 ծխականներու:

Ամերիկեան եւ հայկական ազգային Զայլերգ-օրհներգներէն ետք, եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Վահան Քհնյ. Կոստանեան կատարեց սեղանի օրհնութիւնը: Հոգաբարձութեան ատենապետ Տիար Ճէֆ Դանիէլեան ձեռնհասօրէն վարեց յայտագիրը: Ներկայացուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր՝ որուն ընթացքին Սալբի Մայլեան հանդես եկաւ մեներգներով, դաշնակի ընկերակցութեամբ Նայիրի Շահուվարեանի:

Եկեղեցւոյ հովանիին ներքեւ գործող Տիկնանց, կրտսերներու եւ երեցներու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Արանց միութեան ներկայացուցիչը իրենց տարեկան գործունեութեան հակիրճ ներկայացումը ընելէ ետք՝ աշխատանքի նիւթական վաստակէն եկեղեցւոյ բարեգարդման ծրագիրներուն նուիրեցին շուրջ 90 հազար տոլար կոկիկ գումար մը: Եկեղեցւոյ հոգաբարձութիւնը բարձր գնահատեց եկեղեցւոյ հովանիին ներքեւ գործող եւ եկեղեցւոյ ու Ֆրեզնոյի հայ համայնքին կրօնադաստիարակչական մարզն ու հոգեւոր կեանքի առաւել կազմակերպման ու պայծառութեան նուիրուած Տիկնանց եւ Արանց Միութիւնները եւ կամաւոր բոլոր անդամ անդամուհիները: Հոգաբարձութեան կողմէ յատուկ գնահատանքի

արժանացան՝ Փաթրիշիա Պուլուբեան, Լիլիան Ջուլճեան, Փաթ Սաւոյեան, եւ Սիւզի Փառնակեան: Եկեղեցւոյ Զոգեւոր Զովիւ Արժ. Տ. Վահան Զինյ. Կոստանեան, եկեղեցւոյ հիմնադրութեան 106րդ տարեդարձի տօնախմբութեան առթիւ արտասանեց շնորհաւորութեան եւ երախտագիտական խօսք ու բեմ հրաւիրեց Բարձր. Առաջնորդ Սրբազանը որպէսզի կատարէ փակման իր խօսքը եւ տայ օրհնութիւնները:

Սրբազան Զայրը, անգամ մը եւս շնորհաւորելէ ետք ֆրեզնոյի հայ համահյնքի ու եկեղեցւոյ հիմնադրութեան 106րդ տարեդարձը, վեր առաւ ու շեշտեց եկեղեցւոյ եւ քրիստոնէական առաքելութեան ծառայական ճամբուն վրայ յաջողութեան երեք բանալի սկզբունքներ.

ա.- Վերանորոգ յանձնառութիւն,

բ.- Միասնական եւ համերաշխ գործակցութիւն, որ կարելի եւ հնարաւոր կ'ըլլայ միայն այն ատեն երբ ունինք՝

գ.- Անշեղ հաւատք, անմար յոյս եւ անպայմանական սէր:

«Ահա այս սկզբունքներով մեր հայրերը մեծ գրկանքներով եւ բիրտ գոհողութիւններով գործեցին: Նուիրուեցան հոգեւոր լուսաւորութեան, հայապահպանման սրբազան առաքելութեան: Աստուծոյ, եկեղեցւոյ եւ ժողովուրդի հոգեւոր եւ ֆիզիքական կարիքները անվերապահ սիրով եւ յանձնառութեամբ կատարեցին ու ծառայեցին եկեղեցւոյ պայծառութեան եւ հայ համայնքի գերագոյն շահերուն, որովհետեւ իրենց անձերէն եւ անհատական սեղմ, ճղճիմ հաշիւներէն վեր դասեցին համայնական ու ազգային նուիրական արժէքները», ըսաւ Առաջնորդ Սրբազանը եւ շարունակեց.

«Սիրելիք, այդ աւանդը այսօր մեզի փոխանցուած է. հաւատքով գործենք, ծառայութեամբ մեծնանք ու սիրով հզօրանանք եւ մեր հայրերէն մեզի փոխանցուած սրբազան ու անգին ժառանգ հաւատքը ու հայու ոգին գիտնանք ու կարենանք փոխանցել մեր նոր սերունդին: Որովհետեւ անոնք են վաղուան եկեղեցին ու հիմնադիրները քրիստոնէայ հայ ընտանիքներու»:

«Կիլիկիա» երգով ու Պահպանիչ աղօթքով վերջ գտաւ օրուան հանդիսութիւնները, եւ հաւատացեալներ վերանորոգ հաւատքով եւ նոր հարիւրամեակներ հայու առաքելական լոյս հաւատքով դիմագրաւելու հաստատակամութեամբ յուսալից եւ վճռակամ վերադարձան իրենց բնակարանները:

## **CELEBRATION OF THE 106<sup>TH</sup> ANNIVERSARY OF HOLY TRINITY CHURCH OF FRESNO**

On Sunday, November 12, 2006, the 106th Anniversary of Holy Trinity Armenian Apostolic Church in Fresno was celebrated with Divine Liturgy and a sermon by His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate. Very Rev. Fr. Muron Aznikian, and Rev. Vahan Gosdanian assisted at the altar. In his sermon, the Prelate credited the founders of the church, who made every effort possible to establish the church on solid ground for our children and for the coming generation of faithful Armenians.

Following Divine Liturgy, the parishioners gathered at the church social hall where the annual banquet of the church was held. Rev. Vahan Gosdanian offered the

opening prayers, followed by the singing of the American and Armenian National Anthems by Ms. Angele Ohannessian. The master of ceremonies was Board of Trustees Chairman Mr. Jeff Tanielian, and the meal was prepared by the parish Men's Society. More than 250 individuals were in attendance to celebrate the anniversary of the church.

It has become the annual tradition of the parish to honor individuals for their outstanding service to the church and community. The honorees this year were Mrs. Patricia Bouloutian, Mrs. Lylia Chooljian, and Ms. Patricia Sevoian. As the recipients were unaware of the recognition they were about to receive, this was a pleasant and special moment for each one of them and their families.

Subsequently, Mr. Hrair Messerlian, chairman of the newly formed Outreach and Strategic Committee, reported on various concerns collected through a questionnaire and offered his observations. The artistic portion of the program consisted of musical selections in Armenian and English by Salbi Mailyan accompanied by Naira Shahsouvarian. As the grand finale, Naira pleased everyone by playing Alexander Haroutounyan's Sasountsineri Bar on the parish's new baby grand piano.

The event concluded with encouraging remarks by the Prelate and Rev. Vahan Gosdanian, followed by the collective singing of Giligia.